«Նվիրիր ուրախություն երեխաներին» արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից թողարկված American Express Gold, American Express Gold Debit, American Express Blue և American Express Cashback քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտատերերի (այսուհետ՝ Քարտատեր) համար Կազմակերպչի կողմից իրականացվում է «Նվիրիր ուրախություն երեխաներին» արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2. Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3. Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Արշավի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1. կետում նշված հարթակներում:

2.3 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում համագործակցող առևտրի և սպասարկման կետերի կողմից մատուցված ծառայության համար:

3. Մասնակցության պայմաններ

3.1. «Begemotik», «Babyroom », «Choupette», «Kids mall», «Kapika» և «Mommy» առևտրի և սպասարկման կետերի (այսուհետ՝ ԱՍԿ) 2026թ. հունիս 1-ից հունիս 7-ը ներառյալ, Քարտերով վճարային գործարքներ (այսուհետ՝ Գործարք) կատարելու դեպքում Քարտատերերին կտրամադրվեն ստորև ներկայացված չափով զեղչեր.

Առևտրի/սպասարկման կետ	Զեղչ
Babyroom	20% զեղչ ամբողջ տեսականու համար
Choupette	20% զեղչ ամբողջ տեսականու համար
Mommy	15% զեղչ ամբողջ տեսականու համար

Kids mall	10 % զեղչ ամբողջ տեսականու համար
Kapika	10 % զեղչ ամբողջ տեսականու համար
Begemotik	- 10% զեղչ՝ հունիսի 1-ին չզեղչված տեսականու համար - 10% զեղչ՝ հունիսի 2-7-ը ներառյալ ամբողջ տեսականու համար

3.2. Արշավին կարող են մասնակցել American Express նաև կից քարտերի Քարտատերերը:

3.3. Արշավին կարող են մասնակցել լրացուցիչ American Express քարտերի Քարտատերերը, հիմնական Քարտից անկախ:

3.4. Բանկի կողմից զեղծարար և/կամ առերևույթ կեղծ և/կամ հաճախորդի գործարար բնութագրին չհամապատասխանող և/կամ տնտեսական նպատակը չհիմնավորվող գործարքների վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Վերոնշյալ չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: